

լոյս դարերու հորիզոնին վրայ: Միտիմար, աւրելին նման՝ որ կը ջերմացնէ ու կեանք կու տայ հպարտ մայրիկներէն մինչեւ ամենախոնարհ մանուշակին, ծագեցաւ Հայաստանի հորիզոնին վրայ, ալեւոր Այրարատին վրայ, բոլորին համար, աղքատին և հարուստին, մտաւորականին և անգրագէտին համար: Միտիմար ազգի մը ամբողջ պատմութիւնը եղաւ, և ազգը իր մարմնացումը. ան հանքագործի մը պէս պեղեց մթնոլորտները, լայն ճանապարհ մը բացաւ գէպի հին խմաստութեան տաճարը. հալածուած գաղթեց իր հայրենիքէն ինչպէս թռչունները խտաշունչ ձմրան գիմաց, աւելի գեղեցիկ գարուններ բերելու համար այն աշխարհին որ դարերով կը հեծէ բռնութեան և աւերումի անողոք սմբակներուն տակ: Իր անվարան խոր հաւատքովը մարմին տուաւ Ս. Ղազարու չքնաղագեղ կղզեակին՝ Վենետիկեան լճակին շողշողուն ջուրերէն գուրս եկող յաւերժաշարսի մը նման: Կերտեց հոն հաւատքի, սիրոյ և խնայողութեան ջահերով, կարմիր կանանչ գոյներով փոքրիկ Հայաստան մը: Իրմով կրօնքի և եկեղեցւոյ երկնակամարը նորանոր փայլուն աստղերով զարդարուեցաւ. իրմով ամէն գիտական ու գեղարուեստական մարդեր երեւելի հանձարնեւորով պճնուեցան. անոնց ամէնուն հետ Միտիմար ծնաւ, Միտիմար ապրեցաւ, և ինչպէս չըսել հիմա թէ մարդիկ կան որոնց մահը անմահութիւն է:

Բանախօսին այս խանդավառ խօսքերուն յաջորդեցին երգչախումբին ոգեւորիչ վերջին երկու կողմերը իտալական դասական գլուխ գործոցներէն քաղուած. նախ Belliniի «Norma»-էն «Nella città dei Cesari», երկրորդ՝ Verdiի «Trovatore»-էն «Leone di Castiglia».

Ճեմարանական հանգէսին փակումը կատարեց Արհի. Գերպ. Աբրահայրը, շեշտելով օրուան մեծ յիշատակին կարեւորութիւնը որ կը հրաւիրէ ամէն Հայ ներշնչուելու Միտիմարի առաքելութիւններուն և գործերուն օրինակներէն, որոնք գերմարդկային եղան և պատու աստուածային բացառիկ շնորհքին, նա մանաւանդ երբ փոխադրուինք մաքով իր ապրած պատմական ժամանակներուն և պայմաններուն մէջ: Ան, տանելու համար իր եղբայրներուն Աւետարանի լոյսը, նախնի Հայրապետներու շունչով աշխատեցաւ հիմնել իր Ուխտը, գնելով զայն երկնքի և երկրի հզօր Դշխոյին պաշտպանութեան տակ,

հանալու այս աշխարհին վրայ ալ. կ'ապրին երկնքի համար, բարձր գաղափարներու համար, ասուպներ չեն՝ այլ արեգակներ, որոնք կու գան ամէն օր հոգեկան արշալոյս բերելու, պիտելու որուն մայրենի հովանիով և Միտիմարի հսկողութեամբ վերջին երկու աշխարհաւոր պատեւրազմներէն ան գուրս եկաւ գրեթէ անջնաս: Պիտի ապրի այս գործը Տերաօր «Եղեցի»ով, Հայ ազգին սրտին ու մտքին լուսատու փարոսը: Խուռն ծափահարութեամբ վերջացաւ հանգէսը, ազգայինները մեկնեցան նորոգուած կրօնքի և ազգի սիրով, հպարտ զգալով իրենք՝ զիրենք օտարներուն առջեւ, օտար հիւրերն ալ զմայլանքով և հիացումի զգացումներով:

Հ. Ս. Ս.

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ. - ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ

Ապրիլ 27ին, առաւօտեան ժամը 9ին, վարժարանիս աշակերտներու ծնողներն ու շատ բարեկամներ փութացեր էին համախմբուելու մատրան և յարակից սրահին մէջ, ներկայ գլուխու Ս. Պատարագին՝ զոր մատոյց հիւրաբար քաղաքս գտնուող Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, կատարելով նաեւ Հոգեհանգստեան պաշտօնը Ապրիլեան մեր նահատակներու և բոլոր Միտիմարեան ու Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտներուն համար:

Դաշտագեղ ու ծաղկազարդ պարտէզին մէջ կախուած էր Միտիմար Աբրայի պատկերը կանաչ գրասանգներով, և պատրաստուած էր բեմը ուր կը նախագահէր վարժարանիս բարերար Տիար Վենսան Մաթոսեան, իր երկու կողմերն ունենալով Տիար Օ. Քատիֆեան, Լ. Մաթոսեան և Պալեան եղբայրները, Պր. Քափլոյ, և Միտիմարեան Հայրերը: Մինչ Ան. Յղութեան երկու վարժարաններու մեծաւոր Մայրերն ու Քոյրերն ու բազմաթիւ հանգիստականներ գրաւած էին արդէն իրենց տեղերը, արթուն առաջ՝ նորոգութեամբ վարժարանիս ուսուցիչ՝ Տիար Յովսէփ Մազըճիի:

Հանգէսը կը բացուէր Միտիմար Աբրահայր «Չարժիր աշխարհ» քայլերգով, վարժարանիս աշակերտներէն երգուած, հեղինակութիւն Մ. Ռ. վարժարանի քառասնամեայ ուսուցիչ Մաէս-

Թոյ Աւրելիանոյ Բոնցիլաքուայի: Խօսք առաւ նախ վարժարանին անօրէն Հ. Քերրոք Վ. Չրաքեան, յիշեցնելով թէ 198 տարիներ առաջ ճիշտ ապրիլ 27ին կը փակէր մեծն Միտիմար իր աչքերը, ուրախ և գոհ, որովհետեւ կատարած էր Աստուծոյ իրեն յանձնուած կարեւոր գերը, հաստատելով Միաբանութիւն մը, որ շարունակողը պիտի ըլլար այնքան հաստատականութեամբ սկսած իր գործին, այն է Ազգին վերականգնումին: Եւրջը հաւաքուած միաբանները յուզուած և արտասուելից կ'ուխտէին արիաբար հետեւելու իրենց Հօր գծած ուղիին՝ ծառայելով կրօնքին և Հայրենիքին: Կը ըսէր զանգակներու զօղանջները, և գործը կը շարունակուէր: Յաջորդ տարին, նոյն օրը, կը վերանորոգուէր նոյն յիշատակը և նոյն խոստումը, և այսպէս 198 տարիներէ ի վեր, ըլլայ Մայր Վանքին մէջ, ըլլայ Միտիմարեան վարժարաններու մէջ, ուր ալ գտնուին, կը կատարուի Միտիմարի տարեկան յիշատակը, արծարծելու որդոցը և աշակերտներու սրտերուն մէջ յարգանքը՝ գէպի Միտիմար, և խոստումը՝ ծառայելու կրօնքին և Հայրենիքին: Երկու թեւեր են անոնք, առանց որոնց կարելի չէ բարձրանալ ստորին այս աշխարհի նիւթած աւերակայէր արգելքներէն, նուիրուելու գաղափարականի մը որ վեհ է և սուրբ: Հաւաքուած մենք ալ վարժարանիս գեղածիծաղ այս պարտիզին մէջ, մեր շուրջն ունենալով մեր բարեւորներն ու համակիրները՝ կ'ուզենք ընծայել մեր մեծ Հիմնադրին արժանաւոր մեծարանքը, կ'ուզենք որ բոլորքի աշակերտութեան սիրտը յարգանքի ու սիրոյ կրակով անոր հանգէս՝ որ բոլոր Ազգէն նկատուած է երկրորդ Լուսաւորիչ մը:

Ինծմէ աւելի, յարեց յարգոյ Տեսուչը, խօսքը կ'իյնայ այսօր երկու մեծարգոյ Հայրերուն, որոնք քիչ յետոյ պիտի խօսին պատուարժան հանգիստականներու:

Յետոյ արտասանութիւններ եղան փոքր և մեծ աշակերտներէն, որոնց մէջ յատկապէս արժանի է յիշատակութեան Տիգրան Թիւթիւն-ճեանի գրութիւնը: Նախկին Սաներու կողմէ ինամոտ ուսումնասիրութիւն մը կարգաց, Պր. Յակոբ Անտուրեան, Միտիմարեան գաստիարականութեան վրայ՝ համեմատելով զայն Ֆրեյներու կրթական ոճին հետ, որոնց Եղեպատսի մէջ հաստատուելուն հարեւրամեակը կը կատարուի:

Օրուանս բանախօսն էր Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, որ յետ Միտիմար Աբրայի մէջ գրուած երգիչը և երգահանը, և իր կեանքի պատմութեան մէջէն քաղելու ինչ որ երաժշտութեան նկատմամբ ակնարկութիւններու գրուածքներ կան, երգեց շատ ներդաշնակօրէն Միտիմարայ յորինած երկու երգերը, երկուքն ալ նուիրայ յօրինած երկու երգերը, երկուքն ալ նուիրուած Ս. Կուսին. առաջինը՝ «Երանուհի»-ն, իսկ երկրորդը՝ «Գովաւ դասուց»-ը, և վերջին երկրորդը՝ «Գովաւ դասուց»-ը, և վերջացուց իր համառօտ բայց հաճելի բանախօսութիւնը Վենետիկի երբեմն Պատրիարք Ծիրանաւոր Լաֆոնթէնի տուած գովեստով Մ.-Ռ. վարժարանի մէջ Մեծին Միտիմարայ նուիրուած նման հանգէսի մը առթիւ, թէ Միտիմար երաժշտագէտ ալ էր:

Վարժարանիս ջութակի խումբը այս անգամ ալ իր ուսուցչին առաջնորդութեամբ նուագեց մէկ քանի ընտիր կտորներ: Իսկ աշակերտութիւնը Հ. Գերոք Վ. Ոսկեանի ղեկավարութեամբ երգեց իր յօրինած մէկ երգը ի պատիւ Միտիմար Աբրայի և «Երբոր բացուին»-ը ու վարժարանին քայլերգը:

Փակման ու շնորհակալութեան խօսքը արուած էր վարժարանին Մեծաւոր Հ. Տիմոթէոս Վ. Կիւլեանի, որ ճարտարօրէն հիւսեց Ապրիլեան մեր Նահատակներու յիշատակը Միտիմար Աբրայի բնաբանին՝ «Կրօնք և Ազգ» խօսքին հետ, պանծացնելով մեր մտաւորականներուն և մարտիրոս Ժողովուրդին մէջ Հաւատքը և Հայրենասիրութիւնը, ինչ որ փայլած է Միտիմարայ ամբողջ կեանքին և Միտիմարեան Միաբանութեան երկգարեան գործունեութեան մէջ:

Բուռն ծափահարութիւններով ընդունուեցան մեծարգոյ Հօր խօսքերը, և ծնողներն ու բարեկամները բաժնուեցան յայտնելով իրենց գոհութիւնը:

ՏԵՍՏՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ

ՅԻՇԱՏԱԿԸ ՄԻՒԱՆԻ ՄԵՋ

Ապրիլ 27-ին, հայ և օտար հոծ բազմութեան մը ներկայութեան, իտալիոյ հայ Մշակութային Միութիւնը արժանավայել կերպով ոգեկոչեց Ապրիլեան Նահատակներուն յիշատակը: Բացման խօսքը արտասանեց բժ. Սրամայիս


Արապեան, որուն յաջորդեց Շորէնի Մահերգը, զոր նուագեց յայտնի դաշնակա՜ար Բրոֆ. ուհի Օր. Մ. Պոտուրեան: Յաջորդաբար խօսք առին Ճարտ. Արմէն Սարեան (խաչերէն), բժ. Մանուկ Խանգէկեան և Պ. Չափրատ: Ճառախօսներուն կեդրոնական գաղափարն էր տեսնել Ապրիլ 11/24-ին զոհաբերութան մէջ այն հոգեկու և անդիմադրելի ուժականութիւնը որ համայն չայ ազգը կը մաքնիսացնէ ընկրկում չճանչցող գերբնական ցաւի մը մէջ: Բրոֆ.

ուհի Օր. Մ. Պոտուրեան յաջորդաբար նուագեց Շորէնէն, Թալիափիէգրայէն, Ալուբրէն, Ալպէնիցէն և երգեց Կրէչխանիովէն, Կոմիտասէն (Կուռնկը), Մէլիքեանէն (Վարդը), խոր տաղանութեամբ համակելով ներկաները: Արտասանութիւններ ըրին տիկ. Քնարիկ Եղիկեան (Սիամանթոյի Մօր մը Երազը) և բժ. Բադրատ Եղիազարեան (Ա. Ահարոնեանի Յարգանք քեզը), երկուքն ալ մեծ ձեռնհասութեամբ:

Ա. Ս.

ՀԱՆԳՒՍՏ ՀՈԳՒՈՅ

ԳԵՐ. Հ. ՅՈՎՀԱՆ Վ. ԱՒԳԵՐԵԱՆ



Տարւոյս Մայիսը իր վարդերուն հետ ամենախորին սուգ մըն ալ բերաւ Մխիթարեան Միաբանութեան, որ Գերյ. Հ. Յովհան Վ. Աւգերեանի մահով կը կոր-

սընցնէ իր մեծ զաւակներէն մէկը, պատկառելի իր գիտնականի տաղանդին և լայնածաւալ հմտութեան համար՝ ազգային ու միջազգային գրականութեան մէջ, ինչպէս իր սրբակրօն ցայտուն կենցաղին:

Ծնած 1877ի Հոկտեմբեր 3ին Գաղատիոյ մէջ, հաղիւ տասնամեայ՝ սրբութեան ծառայութեամբ տեսչափաւ՝ կը թռչէր Ս. Ղազար Մխիթար Աբրահամ զաւակներու Կարգը մտնելու, նուիրուելով ամբողջապէս Աստուծոյ Ս. Սեղանին, ծառայելու համար իր ազգին:

1895ին ինքզինքը կը կապէր Մխիթարեան Միաբանութեան՝ մշտնջենաւոր ուխտով, և 1899ին կը ձեռնադրուէր քահանայ Գերապայծառ Իգնատիոս Արքեպս. Կիւրեղեան Աբրահամ ձեռքով:

Ու այնուհետեւ իր ամբողջ վանական կեանքը շուրջ կէս դար անընդհատ նուիրում մը եղաւ ուսման և գիտութեան ասպարէզին և հոգիներու փրկութեան գործին:

Մեր տոհմային գիտութեանց իր լայն

պաշարով՝ քահանայական ձեռնադրութեան օրէն արդէն սկսաւ իր ուսուցչական դասախօսութիւնները՝ Հայ լեզուի, գրականութեան և պատմութեան, նախ վանքի աշակերտութեան և յետոյ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանին մէջ, ուր ապա կարգուեցաւ Ուսումնապետ:

Յատուկ ձիրք և սէր ունենալով լեզուագիտական ու բանասիրական ուսումններուն՝ նախ երեւելի լեզուագէտ Ուսուցչ. Emilio Teza-ի աշակերտեցաւ, յետոյ 1906-1909 տարիներու ընթացքին կատարեալագործեց այդ մասնագիտութեան Մոնաքոյի և Պերլինի համալսարաններուն մէջ:

1909ի ամառը վերադարձաւ վանք ու սկսաւ իր գրական կեանքը դասախօսելով միանգամայն պատմական և մատենագրական ճիւղերը: Նոյն չրջանին մասնակցեցաւ մեր վանքին և վարժարաններու վերահսկող Ուսումնական Ժողովին՝ խորհրդականի և քարտուղարի պաշտօնով (1909-1912), ապա 1912ին անուանուեցաւ Խմբագրապետ «Բաղմալէյ»-ի և բոլորեց երկամեայ բեղուն չրջան մը. այնուհետեւ կոչուեցաւ Միաբանութեան կեանքի մեծագոյն գործունէութիւններուն և վարչական պատասխանատու պաշտօններու. այսպէս 1916 Մարտ 30ին ընդհանուր քարտուղար, պաշտօն՝ որուն մէջ կը վերահաստատուէր 1921ին և կը տեւէր մինչեւ 1929ի Միաբանական Ընդհ. Ժողովը, որ զինքը ընտրեց Ընդհանուր Աբրայ վեցամեայ չրջանի համար (1929-1935):

Դարձեալ նշանակելի է որ 1916-1918 երկամեակին վարեց վանքի աշակերտաց ձեռնարկութիւնը և իր զանազան գործառնութեանց կարգին՝ բերաւ իր մեծ բաժինը Մուրատեան վարժարանի չէնքի դնումին, հիմնարկութեան և ուսումնական կազմակերպութեան մէջ 1928ին՝ երբ շուրջ 60 տարուան դադարէ մը վերջ Փարիզի (Սեւր) մէջ կը վերաբացուէր յիշեալ վարժարանը:

Իր կեանքի վերջին տարիները 1936-1947 ուսման, հոգիներու առաջնորդութեան և մարդասիրական գործերով զբաղեցաւ, միանգամայն միշտ պատրաստակամ բերելով իր լուսաւոր խորհուրդներն և օժանդակութիւնը Միաբանութեան կարեւոր գործերուն մէջ:

Անցնող ձմեռը իր խիստ սառնամանիքով ծանր հարուած մը տուաւ այդ ժիր անձնաւորութեան, որ փոքրիկ մարմնի մէջ վառվռուն և հանճարեղ հոգի մը ունէր. հարուածը աղղեց սրտին՝ որու տկարութիւնը հետզհետէ յառաջացաւ և այլևս անկարող եղաւ յաղթել ստէպ կրկնուող նոպաներուն: Ու մեռաւ նա խաղաղիկ, զօրացած սուրբ խորհուրդներով, մինչ լըքուած սրտով իր սնարին քով կը հսկէին աղօթաւոր միաբանակից Հայերը՝ Գերյ. Աբրահամէն մինչեւ յետին վանականը, Աստուծոյ յանձնելով անոր հոգին՝ որ ապրած էր միշտ սիրելով իր Արարիչը բոլոր սրբտով ու իրեն առաքելութիւն ըրած էր սիրցնել զԱնիկա ամէնուն՝ իր խօսքով, օրինակով, աղօթքով:

Եւ այնուհանգերձ որ մեր կղզին զըրկուած է ուղղակի յարաբերութեան Լիտոյի և Վենետիկի հետ, Մայիսի 11ի առաւօտեան հետզհետէ կը խոնուէր հեռուէն ու մօտէն եկող բաղմութիւն մը հաւատացեալներու, բարեկամներու, քաղաքին ու Լիտոյի եկեղեցական և զինուորական իշխանութիւններու ներկայացուցիչներ, իրենց սիրոյ և յարգանքի վերջին տրիտուրն ընծայելու հանդուցեալին:

Չայնաւոր պատարազն և հետեւորդ յուզարկաւորութիւնը բոլորովին յուզիչ էին. ներկայ էին հանդուցեալին մօտաւոր ազգականները՝ եղբոր և քրոջ զաւակները:

Թաղմանական թափօրը «Գառնա»-ի ծանր ու տխուր ամանակով կը յառաջէր վանքի դարաստանին եղբերքով՝ ծաղիկներու և զաւարտութեան պտակներուն մէջէն